ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ (ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱ ԵՎ ՀԱՅՑՈՐԴՈՒԹՅՈՒՆ) ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Գլխավոր տեղեկություն

Համար	N 1167-Ն
Տիպ	Հրաման
Ակտի տիպ	Պաշտոնական Ինկորպորացիա (11.09.2017-մինչ օրս)
Կարգավիճակ	Գործում է
Սկզբնաղբյուր	ՀՀՊՏ 2010.08.02/18(370) Հոդ.206
Ընդունող մարմին	Կրթության և գիտության նախարար
Ընդունման ամսաթիվ	21.07.2010
Ստորագրող մարմին	Կրթության և գիտության նախարար
Ստորագրման ամսաթիվ	21.07.2010
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	12.08.2010

«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
28 հուլիսի 2010 թ.
Պետական գրանցման թիվ 11010270

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

21 հուլիսի 2010 թ. N 1167-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ (ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱ ԵՎ ՀԱՅՑՈՐԴՈՒԹՅՈՒՆ) ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ
(վերնագիրը խմբ. 13.04.17 N 371-Ն)

Հիմք ընդունելով «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ կետը՝

Հրամայում եմ՝

1. 2010/2011 ուսումնական տարվանից Հայաստանի Հանրապետության ասպիրանտուրայում (առկա և հեռակա) և հայցորդության համակարգում (2012 թվականի հունվարի մեկից) հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող բարձրագույն ուսումնական հաստատություններում և գիտական կազմակերպություններում ներդնել հետազոտողի կրթական ծրագրով նախատեսված կրեդիտային համակարգ՝ համաձայն հավելվածում բերված «Ուղեցույց»-ի:
(1-ին կետը լրաց. 03.05.11 N 483-Ն)
2. Հանձնարարել ՀՀ ԿԳՆ աշխատակազմի բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչությանը (պետ՝ Ռ. Սուքիասյան) և իրավաբանական վարչությանը (պետ՝ Մ. Գրիգորյան) սույն հրամանը 3-օրյա ժամկետում ներկայացնել գրանցման ՀՀ արդարադատության նախարարություն:
3. Հանձնարարել ՀՀ ԿԳՆ աշխատակազմի բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչությանը (պետ՝ Ռ. Սուքիասյան)՝ գրանցումից հետո 5-օրյա ժամկետում տեղեկացնել բարձրագույն ուսումնական հաստատություններին և գիտական կազմակերպություններին բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության երրորդ աստիճանում կրեդիտային համակարգի ներդրման մասին:
4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ Ա. Ավետիսյանին:

Ա. Աշոտյան

Հավելված
ՀՀ կրթության և գիտության նախարարի
2010 թվականի հուլիսի 21-ի
N 1167-Ն հրամանի

ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ (ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱ ԵՎ ՀԱՅՑՈՐԴՈՒԹՅՈՒՆ) ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ
(վերնագիրը խմբ. 13.04.17 N 371-Ն)

1. Սույն հավելվածով կարգավորվում են հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերում (ասպիրանտուրա և հայցորդություն) կրեդիտային համակարգի ներդրման հետ կապված հարաբերությունները:
2. Ասպիրանտուրայի և հայցորդության կրթական ծրագրերը (այսուհետ՝ Ծրագիր) բաղկացած են երկու փոխկապակցված մասերից՝ կրթական և հետազոտական:
3. Ծրագրի լրիվ բեռնվածությունը համարժեք է 180 կրեդիտային միավորի (կամ 180 կրեդիտ x 30 ժամ = 5400 ժամ՝ ներառյալ լսարանային, արտալսարանային և ինքնուրույն աշխատանք):
4. Ծրագրի 50 կրեդիտը նախատեսվում է կրթական բաղադրիչին, 130 կրեդիտը՝ հետազոտական աշխատանքին:
5. Ծրագրի կառուցվածքը, բովանդակությունը, գնահատման ձևերը, ուսումնական և հետազոտական բեռնվածությունները բաշխվում են համաձայն սույն հավելվածով սահմանված Ձև N 1-ի:

Ձև N 1

	ԲԱԺԻՆՆԵՐԻ ԵՎ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐ	ԿՐԵԴԻՏ
ԿՐԹԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ		**50**
ՊԴ.00	**Պարտադիր դասընթացներ և քննություններ**	**30**
ՊԴ.01	Մասնագիտություն. ատենախոսության թեմայի թվանիշով	8
ՊԴ.02	Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն	4
ՊԴ.03	Մասնագիտական օտար լեզու	4
ՊԴ.04	Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ	4
Պ.00	Պրակտիկա[1]	10
ԸԴ.00	**Ընտրովի դասընթացներ և ստուգարքներ[2]**	**20**
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ		**130**
ՀԱ.00	Ատենախոսության թեմայով հրատարակված անհրաժեշտ նվազագույն աշխատություններ[3]	30
ՏԱ.00	Տարեկան ատեստավորումներ	20
ԱԴԵ.00	Ատենախոսություն և թեմա հաստատած հիմնարկի դրական եզրակացությունը ատենախոսության վերաբերյալ	80
ԸՆԴՀԱՆՈՒՐ		**180**

[1] 6-ամսյա աշխատանքային ստաժ ունեցող ասպիրանտն իր ցանկությամբ կարող է չմասնակցել պրակտիկային և կրեդիտները կուտակել ներկայացնելով աշխատանքի վայրից համապատասխան տեղեկանք:

[2] Ասպիրանտների կողմից ընտրովի դասընթացների ընտրությունը կատարվում է համապատասխան ստորաբաժանման (ֆակուլտետ, ինստիտուտ, կենտրոն) գիտական խորհրդի կողմից հաստատված դասընթացների ցուցակից:

[3] «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման» կանոնակարգի 10-րդ կետով սահմանված:

(նախադասությունը հանվել է 11.08.17 N 904-Ն)

(հավելվածը խմբ. 13.04.17 N 371-Ն, փոփ. 11.08.17 N 904-Ն)